ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 15 >> մայիսի 2013թ. N 30 - Ա

ք. Արմավիր

ԱՐՍԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի N 546-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի պաշտոնի անձնագիրը՝

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ (ծածկագիր՝ 63-2.1-8) Արսեն Ղուկասյանին 2013 թվականի մայիսի 20-ից մայիսի 31-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան՝ մասնակցելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2011 թվականի N 881-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրով Երևանի պետական համալսարանի կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացներին:
2. Արսեն Ղուկասյանի վերապատրաստման մեջ գտնվելու ժամանակահատվածում վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Գոռ Հովհաննիսյանին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով կատարել գործուղման ծախսերի վճարում:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2013 թվականի մայիսի 20-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ